ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» դեկտեմբեր 2015թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-50/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի 16.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 12.11.2015թ. հայտարարվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը ցանկություն է հայտնել մասնակցել Ընթացակարգին:

Ընթացակարգը պետք է տեղի ունենար էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am համակարգի միջոցով, իսկ հայտերի բացումը պետք է տեղի ունենար 23.11.2015թ. ժամը 14:15-ին:

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ն Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան 23.11.2015թ. պատրաստել է հայտը: Նույն օրը ժամը 12:30-ից սկսած Ընկերության համապատասխան աշխատակիցը բազմիցս փորձել է ներբեռնել պատրաստված հայտը www.armeps.am համակարգում, սակայն համակարգը թույլ չի տվել ներբեռնել պատրաստի հայտը: Հայտը ներբեռնելու բոլոր փորձերը անցել են ապարդյուն և վերջնական արդյունքում մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը հայտը չի ներբեռնվել անհասկանալի պատճառով:

Ընկերությունը, նախքան հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալը, հեռախոսակապով դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահին և քարտուղարին՝ խնդրելով հայտերի ներկայացման վերջնաժամկետը հետաձգել, սակայն վերջիններս տվել են բացասական պատասխան:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 23.11.2015թ. ժամը 14:15-ին, որի արդյունքում Ընթացակարգի համակարգողից Ընկերությունը տեղեկացել է, որ Ընթացակարգի մյուս բոլոր մասնակիցների հայտերը չեն բացվել, այլ ընդամենը երևացել են վերջիններիս անունները: Երևանի քաղաքապետարանը նաև նշել է, որ թվարկված տեխնիկական խնդիրները կրել են համակարգային բնույթ:

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ն տվյալ հարցի կարգավորման նպատակով 23.11.2015թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, Երևանի քաղաքապետարանին և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 26.11.2015թ. թիվ 61/2890 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հայտերի բացման նիստը, որը նշանակված էր 23.11.2015թ. խափանվել է՝ www.armeps.am համակարգում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներին «գնահատել հայտերը» առաջադրանքը չգալու հիմքով, որի կարգավորման համար Երևանի

քաղաքապետարանը համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, սակայն թե՛ Կենտրոնից և թե՛ ՀՀ ֆինանսների նախարարությունից մինչև բողոքը ներկայացնելը Ընկերությունը չի ստացել իր գրության պատասխանները:

Ընկերությունը նշել է, որ ի զարմանս իրենց, պարզվել է, որ Ընթացակարգի շրջանակներում որոշ մասնակիցների հայտերը Ընթացակարգի հրավերի բացման նիստից մոտավորապես 20 օր անց անհասկանալի եղանակով բացվել են հերթականությամբ, ենթադրաբար, ամեն օր տարբեր մասնակիցների հայտերը, որից հետո Երևանի քաղաքապետարանը շարունակել է Ընթացակարգը: Դրա հետ մեկտեղ կատարվել են նաև գնային առաջարկների գնահատում, անգամ մասնակիցների միջև տարբեր չափաբաժինների համար կազմակերպվել են բանակցություններ և որոշվել 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունները: Եվ այս ամբողջ գործընթացը իրականացվել է առանց «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի մասնակցության:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի 1-ին ենթակետը, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Ընկերությունը վկայակոչել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնց համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցող կազմակերպությունների առատությունը կարող է ապահովել ավելի բարձր մրցակցություն մասնակիցների միջև, որը, բնականաբար, կհանգեցնի ֆինանսական միջոցների խնայողության, որն էլ իր հերթին կապահովվի ընթացակարգերի արդյունքում պետական միջոցների տնտեսմանը:

Ընկերությունը իր բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) խնդրել է ուսումնասիրել «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի կողմից հայտի չներբեռնվելու պատճառը և դադարեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը (չկայացած հայտարարել Ընթացակարգը):

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ

թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ՝ Ընկերությունը միջնորդել է որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որևէ որոշման կատարումը, որ ԳԲԽ-50/15 բողոքը քննող հանձնաժողովի 21.12.2015թ. որոշմամբ բավարարվել է:

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 21.12.2015թ. ժամը 15:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-50/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 23.12.2015թ. թիվ 02/61-26503 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստը, որը նշանակված էր 23.11.2015թ., խափանվել է www.armeps.am համակարգում գնահատող հանձնաժողովի անդամներին «գնահատել հայտերը» առաջադրանքը չգալու հիմքով, որի կարգավորման համար Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.12.2015թ. թիվ 1/73-1/37743-15 գրությամբ տրամադրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված գրությունը, որով տեղեկացրել են, որ Պատվիրատուի կողմից նշված տեխնիկական խնդիրը ուղղվել է, ուստի անհրաժեշտ է նշված Ընթացակարգը շարունակել էլեկտրոնային եղանակով:

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ի 16.12.2015թ. բողոքի հիման վրա ձևավորված ԳԲԽ-50/15 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումներ բողոքարկման խորհրդի անունից, 21.12.2015թ. կայացրած որոշմամբ բավարարել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման կատարումը կասեցնելու մասին ժամանակավոր միջոց կիրառելու մասին Ընկերության միջնորդությունը:

Հաշվի առնելով, որ «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի 16.12.2015թ. բողոքը վերաբերում է Երևանի քաղաքապետարանի գործառույթներով չպայմանավորված խնդիրներին, ուստի Կենտրոնի 17.12.2015թ. թիվ 01/04.1/3761-15 գրության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը կարծիք տալ չի կարող:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգը կազմակերպվել է Երևանի հատուկ դպրոցների համար և գնման ընթացակարգի կասեցումը կարող է վտանգել 2016 թվականի հունվար ամսվա համար նախատեսված սննդի կանոնավոր մատակարարումը:

3. ԳԲԽ-50/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-50/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի բացումը պետք է տեղի ունենար 23.11.2015թ. ժամը 14:15-ին:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ «ՏԻՍԱ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար հայտ չի ներկայացրել:

4. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված Երևանի քաղաքապետարանի 24.11.2015թ. թիվ 01/61-24514 գրության՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը, որը նշանակված էր 23.11.2015թ., խափանվել է www.armeps.am համակարգում ընթացակարգը գնահատող հանձնաժողովին «հայտերը գնահատել» առաջադրանքը չգալու հիմքով:

5. Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 24.11.2015թ. թիվ 01/61-24514 գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.12.2015թ. թիվ 1/73-1/37743-15 գրությամբ ներկայացրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 30.11.2015թ. թիվ 01/03.3/3556-15 գրությունը, համաձայն որի տեխնիկական խնդիրը ուղղվել է, և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընթացակարգը անհրաժեշտ է շարունակել էլեկտրոնային եղանակով:

6. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 21.12.2015թ. թիվ 01/04.1/3805-15 գրությամբ դիմել է «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել պարզաբանում այն մասին, թե «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտը ներբեռնելու անհնարինությունը պայմանավորված էր Ընկերության գործողություններով, թե Armeps համակարգի ծրագրային խափանման արդյունք էր, ինչպես նաև, թե Երևանի քաղաքապետարանի կողմից արձանագրված 23.11.2015թ. Ընթացակարգի հայտերի բացման անհնարինության պատճառ հանդիսացած տեխնիկական խնդիրը կարող էր արդյոք պայմանավորեր Ընկերության կողմից www.armeps.am համակարգում հայտը ներբեռնելու անհնարինությունը:

7. Ի պատասխան Կենտրոնի 21.12.2015թ. թիվ 01/04.1/3805-15 գրության՝ «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ն 30.12.2015թ. գրությամբ հայտնել է, որ «ՏԻՍԱ» ՓԲԸ-ն բացակայում է հայտ ներկայացրած մասնակիցների ցանկից: Հայտ ներկայացնելուց առաջացած խնդիրը տեղի է ունեցել ոչ Armeps համակարգի պատճառով և կապված

չէ Ընթացակարգի հայտերի բացման ժամանակ առաջացած տեխնիկական խնդրի հետ (հայտերի բացման ժամանակ առաջացած խնդիրը շտկվել է և Ընթացակարգը բարեհաջող ավարտվել է):

4. ԳԲԽ-50/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 23.12.2015թ. թիվ 02/61-26503 գրությունը, «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի 30.12.2015թ. գրությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է՝ ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն հանդիսացող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի 30.12.2015թ. գրության համաձայն՝ Ընկերության կողմից 23.11.2015թ. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված *հայտը www.armeps.am համակարգում ներբեռնելու անհնարինությունը* ***պայմանավորված չի եղել ծրագրային խնդրի առկայությամբ***, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (տվյալ դեպքում հայտ

ներկայացնելու իրավունքը) սահմանափակված չի եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված չի եղել գնման գործընթացին մասնակցելու իրավունքից, ուստի և առկա չէ Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների խախտումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության 16.12.2015թ. բողոքն անհիմն է, ուստի առաջարկում ենք «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի 16.12.2015թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-50/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան